

ԱՌԱՋԱԲԱՆ

ԺԲ դարի վերջին տասնամյակը ճակատագրական էր հայոց պետականության համար: Լևոն Բ իշխանապետի (1187-1198 թթ.) դիվանագիտական շրջահայացությունը թույլ տվեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանն առավելագույնս անվնաս ու անցնցում դուրս բերել խաչակիրների և Սալահ ալ-Դինի հակամարտության պայթյունավտանգ ոլորտից, այլև պաշտոնապես ճանաչվել ինչպես Հռոմեական սրբազան կայսրության և Հռոմի պապության, այնպես էլ Բյուզանդական կայսրության կողմից: Լևոնի թագադրությունը (Լևոն Ա արքա, 1198-1219 թթ.) բաղձալի հանգրվանի հասցրեց ազգային կորուսյալ թագավորությունը նորոգելու հայ ժողովրդի ավելի քան մեկուկեսդարյա պայքարը: Այդ իրադարձությամբ Կիլիկիայի հայոց պետությունը, ստանալով միջազգային նոր կարգավիճակ ու հեղինակություն, թևակոխեց պատմաքաղաքական նոր շրջափուլ: Լևոնի իշխանության տարիներին Կիլիկյան Հայաստանը վերածվեց բավական կենսունակ քաղաքական միավորի, որի գործությունը բավարար էր ոչ միայն թշնամական պետություններին (Ռումի Սելջուկյան սուլթանություն, Հալեպի Այյուբյան սուլթանություն) դիմագրավելու, այլև հարևան պետությունների (մասնավորապես Անտիոքի իշխանապետության) ներքաղաքական գործերին քանիցս միջամտելու համար: Թեև Լևոն արքայի մահից հետո Հայոց թագավորությունն ապրեց գահաժառանգության խնդրով հարուցված ներքաղաքական լարվածության և անիշխանության խառնակ ժամանակաշրջան, այնուամենայնիվ, պետության բարգավաճումը շարունակություն ստացավ Հեթում Ա-ի (1226-1269 թթ.) երկարամյա գահակալության ընթացքում, երբ հայկական պետությունը վերջնականապես ամրագրեց իր հաստատուն դերը տարածաշրջանի քաղաքական թատերաբեմում և առևտրա-

տնտեսական հարաբերություններում: Թագավորության հիմնադրումը նոր շոնդալից փուլի սկիզբ էր նաև հայկական հոգեւոր և նյութական մշակույթի զարգացման համար:

Մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական, մշակութային, առևտրա-տնտեսական հարաբերությունների համայնապատկերում հայոց պետության և առհասարակ հայկական գործոնի ունեցած կարևորության բազում օրինակներ կարելի է բերել: Այս աշխատանքի հետագա շարադրանքի տրամաբանությունամբ հարկ ենք համարում մատնանշել հայագիտությանը քիչ հայտնի մի փաստ միջնադարի հայ-արաբական առնչություններից: Խոսքը ԺԴ դարի կեսերին Նմենի Ռասուլյան հարստության տիրակալ ալ-Մալիք ալ-Աֆդալ Դիրդամ ալ-Դին ալ-Աբբասի (1363-1377 թթ.) պատվերով (կամ գուցե հենց նրա ձեռքով) գրված վեցալեզու մի բառարանի մասին է³: Բառարանը

³ Բառարանն ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է դեռ 1960-ական թվականներին: Լիբանանցի գիտնական Մանմուդ ալ-Ղուլի հորդորով նրա հետազոտության գործին առաջինը ձեռնամուխ է եղել Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր քյուրֆագետ Տ. Հալասի-Կունը: 1970-ական թվականներին նրան են միացել Պ. Գոլդենը, Լ. Լիգետին և Էդ. Շյուցը՝ ուսումնասիրելու բառարանի համապատասխանաբար հունարեն, մոնղոլերեն ու պարսկերեն և հայերեն նյութը: Տե՛ս **B. Hoberman**, “The King’s Dictionary”, *Aramco World Magazine*, 1982, March-April, pp. 26-29: Արդեն 1985 թ. Պ. Գոլդենն առանձին հոդվածով հրատարակեց բառարանի հունարեն նյութի իր փնտրությունը: Տե՛ս **P.B. Golden**, “The Byzantine Greek Elements in the Rasulid Hexaglot”, *Archivum Eurasiae Medii Aevi* 5, Otto Harrassowitz, Wiesbaden, 1985 [1987], pp. 41-166: Բառարանի խմբագրության և հրատարակման դժվարին աշխատանքը, սակայն, շուրջ երկուսուկես տասնամյակ ձգվեց՝ ընդմիջվելով ծրագրի անդամներ Լիգետիի և Հալասի-Կունի վախճանով: 1998 թ. երկու այլ հետազոտողներ՝ Դ. Վարիսկոն և Ջ. Սմիթը նմանահանությամբ հրատարակեցին բառարանի ձեռագիրը: Տե՛ս *The Manuscript of al-Malik al-Afḍal al-Abbās b. ‘Alī b. Dā’ūd b. Yūsuf b. ‘Umar b. ‘Alī Ibn Rasūl (d. 778/1377): A Medieval Arabic Anthology from the Yemen*, ed. by M. Varisco and G. R. Smith, Warminster, Aris & Phillips for the E.J.W. Gibb Memorial Trust, 1998: Այս ընթացքում մյուս աշխատանքային խումբը շարունակեց բառարանի հրատարակության գործը: Բայց 1999 թ. անսպասելիորեն կյանքից հեռացավ նաև բառարանի հայկական նյութի խմբագրության պատասխանատու Էդ. Շյուցը: Այնուամենայնիվ, մեկ տարի անց բառարանը վերապես հրատարակվեց Պ. Գոլդենի և մոնղոլագետ Թ. Օլսենի ներածական ակնարկներով: Տե՛ս *The King’s dictionary: The Rasūlid Hexaglot: Fourteenth century vocabularies in Arabic, Persian, Turkic, Greek, Armenian and Mongol*, tr. by T. Halasi-Kun, P.B. Golden, L. Ligeti and Ed. Schütz, with introductory essays by P.B. Golden and Th. Allsen, notes and commentary by P.B. Golden, Brill, Leiden, 2000: «Արքայի բառարանի» մոնղոլական նյութի

կազմված է շուրջ 1800 արաբերեն բառեր և արտահայտություններ ունեցող բառաշարքերից, որոնց գուգաղիթ սյունակներում ներկայացված են զբանց պարսկերեն, թյուրքերեն, հունարեն, հայերեն («կիրիկյան հայերեն» / «միջին հայերեն») և մոնղոլերեն համարժեքները՝ արաբերեն տառադարձությամբ (օրինակ, արաբ.՝ Allāh, պարսկ.՝ hūdāy, թյուրք.՝ tenkrī, հուն.՝ ὑἱῆς, հայերեն՝ asfāḏ⁴, այն է՝ «Աստված» կամ արաբ.՝ ḡahannam, պարսկ.՝ dūzah, թյուրք.՝ tamuq, հուն.՝ γῆνῃ, հայերեն՝ tūzuhk⁵, այն է՝ «դժոխք» կամ արաբ.՝ iš'al al-sirāḡ, պարսկ.՝ ḡirāḡ bar kun, թյուրք.՝ ḡirāḡ yandır, հուն.՝ absī lihñārin, հայերեն՝ ḡirāk fārī, այն է՝ «հրա՛գ վառիւր»⁶ կամ արաբ.՝ al-rūḥ, պարսկ.՝ ḡān, թյուրք.՝ dīn, հուն.՝ bsīyī, հայերեն՝ hūki⁷, այն է՝ «հոգի», արաբ.՝ al-sikkīn, պարսկ.՝ kārd, թյուրք.՝ bīḡāq, հուն.՝ māyīrīn, հայերեն՝ tanāk⁸, այն է՝ «դանակ», արաբ.՝ al-naḥl, պարսկ.՝ zanbūr, թյուրք.՝ arī, հուն.՝ milisa, հայերեն՝ mīḡū⁹, այն է՝ «մեղու» և այլն)¹⁰։ Ժիշտ է՝ եմենում ալ-Աֆղալ ալ-Աբբասի իշխանության տարիներին Կիրիկյան Հայաստան պետությունն ապրեց իր մայրամուտը և արդեն 1375 թ. վերջնականապես ընկավ իր անհաշտ ոսոխների՝ Եգիպտոսի մամլուքների և թուրքմենների հարվածների տակ, այնուամենայնիվ, հայոց թագավորության և հայերի թողած քաղաքական և պատմական հետքն այնքան ցայտուն է եղել Ադենի տիրակալի համար, որ նա, հայերենը «դարաշրջանի կարևորագույն լեզու-

մասին տե՛ս **Ho Kai-Lung**, “An initial study for Mongolian factors inside the Rasūlid Hexaglot”, *CAJ*, vol. 52.1, Harrassowitz Verlag, 2008, pp. 36-54: Ուրախալի կլինե՞ր մոտ ապագայում տեսնել բառարանի նաև հայերեն նյութի լեզվաբանական ուսումնասիրություն։

⁴ *The King's dictionary*, p. 61.

⁵ Նույն տեղում։

⁶ Տե՛ս Անդ, p. 78:

⁷ Տե՛ս Անդ, p. 107:

⁸ Տե՛ս Անդ, p. 146:

⁹ Տե՛ս Անդ, p. 171:

¹⁰ Պետք է նշել, որ բառերի ընդհանուր քվից միայն մոտ 700-ի համար են տրված հայերեն և հունարեն համարժեքներ։

ներից» համարելով, դարձրել է իր բառարանի լեզուներից մեկը¹¹: Այս բառարանն առանձին օրինակ է հայ-արաբական միջնադարյան առնչությունների պատմությունից, բայց այն լավագույնս է արտահայտում հայագիտական ուսումնասիրությունների համար օտար սկզբնաղբյուրների ներկայացրած կարևորությունը և դրանց ուսումնասիրությունն անհրաժեշտությունը: Այս աշխատանքն էլ փորձ է շեշտելու այն նշանակալի արժեքը, որ ունի ժԳ-ԺԶ դարերի արաբալեզու պատմագրությունը Կիլիկյան Հայաստանի թագավորության պատմության ուսումնասիրության համար¹²:

¹¹ Ռասուլյան Եմենի պատմիչ ալ-Խազրաջիի (մահ. 1410 թ.) մոտ վկայություն կա հետավոր Եմենում հայերի հայտնվելու ուղիներից մեկի մասին: Խոսքը ստրկավաճառության մասին է: Նա մասնավորապես գրում է. «[Հիջրայի 800 թվականի] Սաֆար ամսին (1397 թ. հոկտեմբեր / նոյեմբեր) ալ-Հարդայի (al-Ḥarda) ափ նվեր ստացվեց եգիպտոսից: Երբ այդ մասին լուրը սուլթանին հասավ, նա շարժվեց դեպի Զաբիդ... Նվերը Զաբիդ հասավ հիշյալ Սաֆար ամսի 24-ին (նոյեմբերի 15) հինգշաբթի օրը: Դա հիասքանչ նվեր էր, ու ընդգրկում էր մոտ երեսուն թյուրք մամուլքներ, տասներկու գլուխ ընտիր նժույգներ՝ զարդարուն թամբերով և [այլ] գեղեցիկ հարմարանքներով, ինչպես նաև մի խումբ հույն և հայ ստրկուհիներ և մի արհեստավարժ բժիշկ եգիպտոսի հրեաներից»: Տե՛ս՝ **‘Alī ibn al-Ḥasan al-Ḥazraǧī**, *Kitāb al-‘uqūd al-lu’lu’iyya fī tāriḥ al-dawla al-rasūliyya*, ց. 2, bi-taḥqīq Muḥammad Basyūnī ‘Asal, Dār al-Hilāl, al-Qāhira, 1914, ց. 294:

¹² Թ-ԺԳ դարերի արաբական պատմաաշխարհագրական երկերն անհամեմատ ավելի լավ են ուսումնասիրված շնորհիվ մեծավաստակ արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի: Արաբական աղբյուրների հայտնած արժեքավոր տեղեկությունների հենքի վրա են գրված նրա «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» (ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1965) և «Հայաստանը և արաբական խալիֆայությունը» աշխատությունները (*Армения и Арабский Халифат*, изд. АН АССР, Ереван, 1977): Հետագայում հայագետ-արևելագետը հանդես եկավ ևս մի խոշոր ձեռնարկով՝ հայագիտությանը նվիրելով ժԲ-ԺԳ դարի ականավոր արաբագիր պատմիչ Իբն ալ-Ասիրի երկու կարևորագույն երկերի՝ հայերին և Հայաստանի պատմությանը վերաբերող հատվածների ծաղկաբաղ թարգմանությունը (*Իբն ալ-Ասիր*, թարգ. քննադից, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1981): Ա. Տեր-Ղևոնդյանը ծրագրել էր ձեռնամուխ լինել Թ-ԺԳ դարերի բոլոր այն արաբական սկզբնաղբյուրների ուսումնասիրությանը և հատվածական թարգմանությանը, որոնցում որևէ հիշատակություն կա պահպանված Հայաստանի և հայերի մասին: Գիտնականի անժամանակ մահը (1988 թ.), սակայն, կիսատ թողեց նրա գործը: 2005 թ. անվանի արևելագետի որդու՝ Վահան Տեր-Ղևոնդյանի ջանքերով իրականություն դարձավ նրա մյուս հիմնադրա աշխատանքը՝ «Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր» վերնագրով (ԲԳՀ հրատ., 2005), որն ամփոփում է 18 մատենագիրների (պատմագիրների և աշխարհագրագետների) երկերից բաղված հատվածների թարգմանություններ: Հատկանշական է, որ այս երկու աշխատություններն էլ հրատա-

Սուլյն աշխատանքի ժամանակագրական սահմանները տեղավորվում են 1260-1292 թթ. միջև: 1250 թ. Եգիպտոսում տեղի ունեցած դինաստիական հեղաշրջումը և Մամլուքյան սուլթանությունից հիմնադրումը նոր շրջափուլ բացեցին Մերձավոր Արևելքի պատմության մեջ: Մամլուքներին շուրջ մեկ տասնամյակ պահանջվեց իրենց պետությունը հաստատուն հիմքի վրա դնելու համար: Այս գործում խոշորագույն ներդրումն ունեցավ սուլթան Բայբարս ալ-Բուռնդուկ-դարին (կառ. 1260-1277 թթ.), ում տասնյոթամյա իշխանության տարիներին Մամլուքյան սուլթանությունը դարձավ Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմի հզորագույն խաղացողներից մեկը՝ արժանի հակառակորդ Լևանտի խաչակրաց պետությունների և մոնղոլների համար: Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Չահիրը հեղինակել է երեք վարձագրական երկ, որոնցից առաջինը նվիրված է հենց սուլթան Բայբարսին:

ԺԳ դարակեսից մի քանի տարի անց (1256 թ.) տարածաշրջանի քաղաքական ասպարեզ ելավ ևս մի խոշոր ուժ՝ Մոնղոլական Իլխանությունը: Արդեն ԺԳ դարի 50-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին այս երկու պետությունների ռազմաքաղաքական բախումը դարձավ անխուսափելի: Մոնղոլների հետ դրացիություն հաստատած և նրանց գերակայությունն ընդունած հայոց թագավորությունն ակամա հայտնվեց երկու տերությունների աշխարհաքաղաքական ներհակ շահերի բախման առաջնագծում՝ հարկադրված լինելով ժամանակ առ ժամանակ իր վրա ընդունել Սուլթանության պատժիչ գործողությունների ծանր հարվածները: Եգիպտոսի սուլթանության և Իլխանության հարաբերությունները, ուղեկցվելով ռազմական առճակատման լայնածավալ գործողությունների և «սառը պատերազմի» հաջորդական փուլերով, տարածաշրջանի քաղաքական եղանակը պայմանավորող գերակա գործոն մնացին առնվազն 60 տարի¹³:

րակվել են «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի շրջանակներում: Մատենաշարի՝ արաբական աղբյուրներին նվիրված անդրանիկ հատորը լույս է տեսել դեռ 1965 թ. Հակոբ Նալբանդյանի հեղինակությամբ: Այդ աշխատությանը փչ ավելի համգամանալից կանդրադառնամ ստորև:

¹³ R. Amitai, “In the aftermath of ‘Ayn Jālūt: The beginnings of the Mamlūk-Ilkhānid cold war”, *al-Masāq*, vol. 3.1, 1990, p. 2.

Իբն Աբդ ալ-Ջահիրի վարքագրական երրորդ երկը նվիրված է սուլթան ալ-Աշրաֆ Խալիլին (կառ. 1290-1293 թթ.), որից պահպանվել է 1291 թվականի վերջին և 1292-ի առաջին մի քանի ամիսների շարագրանքը (Կիլիկյան Հայաստանին և հայերին վերաբերող նրանում առկա եզակի հաղորդումը թվագրելի է 1292-ով):

Պետք է նշել, սակայն, որ այս աշխատանքն իր բնույթով և ուղղվածությամբ աղբյուրագիտական լինելով՝ բնավ հայտ չի ներկայացնում տալ 1260-1292 թթ. հայ-մամլուքյան հարաբերությունների լիարժեք և բազմակողմանի պատկերը: Կիլիկյան Հայաստանի և Մամլուքյան սուլթանության առնչությունների համար կարևորություն ներկայացնող աղբյուրները, ինչպես ստորև ենք տեսնելու, այնքան շատ են և տարաբնույթ, որ դրանց հաղորդած տեղեկությունները գիտական մեկ հետազոտության սահմաններում ոչ մի կերպ տեղավորել հնարավոր չէ: Այսպիսով, արձանագրենք, որ սույն աշխատանքի գերագույն նպատակն ենք համարել ոչ թե Կիլիկյան Հայաստանի՝ հիշյալ ժամանակաշրջանի քաղաքական ամբողջական պատմությունը շարադրելը, այլ հայագիտությանը Կիլիկիայի պատմության ցայտման հրաժեշտ ուշադրության չարժանացած և նույնիսկ անծանոթ մամլուքյան սկզբնաղբյուրներին ծանոթացնելը, Կիլիկիայի պատմության հետազոտողների և հայ արաբագետների հետաքրքրությունը շարժելը՝ ճանապարհ հարթելով ոլորտի զարգացման և նորանոր ուսումնասիրությունների համար:

Կիլիկյան Հայաստանի պատմության գիտական հետազոտությունն ավելի քան երկդարյա վաղեմություն ունի: Գիտական հետազոտության բեղուն ավանդույթներ ունենալով՝ Կիլիկյան Հայաստանի պատմության բազմաթիվ ծալքեր դեռևս չարունակում են անմշակ մնալ, չատուշատ հարցեր՝ անպատասխան: Այս աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրողների ուշադրությունը վերստին հրավիրել այնպիսի մի ոլորտի վրա, ինչպիսին է հայ-մամլուքյան քաղաքական առնչությունների պատմությունը: Թեմայի արդիականության և հրատապության համար կռվան է այն գիտակցումը, որ երկու պետությունների քաղաքական հարաբերությունների բազմաթիվ մանրամասներ մինչ այժմ խորությամբ բացահայտված չեն: Դրա հիմա-

պատճառն այն խիստ անբավարար ուշադրությունն է, որ մինչ այժմ հայկական Կիրիկիայի պատմության մասնագետները ցուցաբերել են Մամլուքյան սուլթանության և առհասարակ մուսուլմանական պատմագրական ժառանգության նկատմամբ: Մինչդեռ մեր խորին համոզմամբ ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր (և պարսկագիր) հեղինակների երկերի ուսումնասիրությունը պարտադիր է արևելամիջերկրածովյան և մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ուժերի թատերաբեմում Կիրիկյան Հայաստանի ունեցած դերն ու միջազգային կշիռն ինչպես հարկն է սահմանելու և ոչ քրիստոնեական ուժերի (ի մասնավոր՝ Մամլուքյան սուլթանության և մոնղոլական Իլխանության) հետ նրա փոխհարաբերությունների թաքնված նրբերանգներն ընկալելու առումով: Ընդսմին, աշխատանքի գիտական նորույթը հայոց պատմության համար կարևորություն ներկայացնող արաբական (և պարսկական) պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրության մեջ է, որոնց մեծ մասն առհասարակ ծանոթ չէ հայագիտությանը և առաջին անգամ է ներգրավվում որպես հայկական Կիրիկիայի պատմության սկզբնաղբյուր:

Հատկանշական է, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հայոց պատմության համար կարևորություն ներկայացնող մամլուքյան սկզբնաղբյուրների հետազոտման ուղղությամբ արտերկրի ուսումնասիրողների կողմից գործադրված ջանքերն ավելին են եղել, քան հայրենական մասնագետներին: Այնուամենայնիվ, օտարերկրյա և Հայաստանի հետազոտողների միջև գիտական համագործակցության անբավարարության պատճառով չի ձևավորվել ոլորտի մշակման միասնական «նախադաս»: Հետևաբար այս աշխատանքի նպատակներից մեկն է հայագիտությանը ծանոթացնել այդ աշխատությունների հետ, հանգուցել Կիրիկյան Հայաստանի պատմության արաբական սկզբնաղբյուրների հետազոտության ոլորտում հայ և օտար մասնագետների ունեցած ներդրումը:

Ծիշտ է, մամլուքյան պատմագրության որոշ աղբյուրների օգտագործման փորձերը դեռ Ղ. Ալիշանի, Վ. Լանգուայի, Ֆ. Տուրնբրիգի, Ժ. դը Մորգանի և վաղ շրջանի այլ ուսումնասիրողների աշխատություններում են ձևակերպվել, բայց դրանք խիստ կցկտուր կամ դիպվածային

բնույթ են կրել, խարսխվել են ոչ թե բուն արաբերեն բնագրերի, այլ եվրոպական լեզուներով կատարված վաղ թարգմանությունների վրա, ինչը շատ հաճախ չփոթմուռնքների և գիտական շրջանառություն սպրդած անճշտությունների պատճառ է դարձել¹⁴:

Թեմայի ուսումնասիրությունյան գործում առաջին լուրջ քայլերը կատարվել են միայն նախորդ դարի 60-ական թվականներից սկսած: Մեկնարկն ազդարարել է 1965 թ. *Revue des Études Arméniennes* հայագիտական հանդեսի էջերում Ֆրանսիացի արևելագետ և պատմաբան Մարիուս Կանարի հրապարակած «Կիլիկիայի հայոց թագավորությունը և մամլուխները մինչև 1285 թ. պայմանագիրը» վերնագրով հոդվածը¹⁵: Հայ մատենագիրների հաղորդումները համադրելով իրեն հասանելի մամլուքյան պատմագրական մի շարք երկերի վկայությունների հետ՝ Կանարը հայ-մամլուքյան փոխհարաբերությունների տվյալ շրջանի, ճիշտ է, շատ համառոտ, բայց բավական տրամաբանված պատկեր է ստացել: Հեղինակը ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր պատմիչներից մասնավորապես հղում է Աբու Շամային, Իզզ ալ-Դին իբն Շադդադին, Իբն Աբդ ալ-Չահիրին, ալ-Մակրիզին, Մուֆադդալ իբն Աբի ալ-Ֆադաիլին (Իբն ալ-Ասսալ), Իբն Շիհնային, ինչպես նաև Բար Հեբրեոսի արաբերեն ժամանակագրությունը: Կանարն իր հոդվածն ավարտում է մեկ այլ ուսումնասիրությամբ հայ-մամլուքյան հարաբերությունների նաև 1285-1375 թթ. շրջանին անդրադառնալու իր մտադրությունը, որը, ցավոք, այդպես էլ իրականություն չի դարձել:

¹⁴ Արաբական սկզբնաղբյուրներից Կիլիկիայի պատմության վերաբերյալ տեղեկություններ փաղած եվրոպացի ուսումնասիրողների (Ժ. դը Մորգանի, Ֆ. Տուրբրիգի, Ս. Տեր-Ներսեսյանի, Թ. Բոեզի, Ռ. Էվարդսի և այլոց) աշխատանքներին հետահայաց անդադարձ է կատարել և նրանց թույլ տված սխալները մատնանշել է Սոյուարտը: Տե՛ս A.D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Brill, Leiden, 2001, pp. 3-14: Նա խոսել է նաև Ամեն-Կող Մուրաֆյանի *La Royaume Arménien de Cilicie et La Cilicie au carrefour des empires* գրքերի մասին: Կիլիկյան Հայաստանի պատմության թեմայով Կ. Մուրաֆյանի վերջին հրապարակմանը (2012 թ.) դեռ կանդրադառնանք: Ա. Սոյուարտի աշխատանքի մասին նույնպես տե՛ս ստորև:

¹⁵ M. Canard, "Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusqu'au traité de 1285", *REA*, 1967, pp. 217-259.

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, թեմայի ուսումնասիրության ուղղությամբ կատարված հաջորդ նշանակալի քայլը Ռիչարդ Սֆոթի 1981 թ. գրած մագիստրոսական թեզն է՝ «Մամլուֆ-հայկական հաւաքեութիւնները Բահրի շրջանում՝ մինչև Սսի անկումը (1250-1375 թթ.)» վերնագրով (անտիպ)¹⁶: Գիտական ղեկավար ունենալով մամլուքյան պատմագրութեան խորագիտակ մասնագետներից մեկին՝ Դոնալդ Լիթթլին՝ Սքոթը բավական տպավորիչ աշխատանք է շարադրել¹⁷: Չնայած մագիստրոսական աշխատանք լինելուն՝ այն առաջին հերթին զարմացնում է ներգրավված մամլուքյան սկզբնաղբյուրների քանակով: Հեղինակն իր օգտագործած արաբալեզու աղբյուրների շարքում նշում է Աբու ալ-Ֆարաջի (Բար Հեբրեսուի կամ Իբն ալ-Իբրիի) արաբերեն ժամանակագրութիւնը, Իբն Աբդ ալ-Ջահիւրի, Բայբարս ալ-Մանսուրիի, ալ-Յունինիի, Շաֆի Իբն Ալիի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Նուվայրիի, ալ-Ջազարիի, Իբն ալ-Դավադարիի, Անանուն մամլուք ժամանակագրի, ալ-Շուջջաիի, Մուֆադդալ Իբն Աբի ալ-Ֆադաիլի, Իբն Քասիրի, Իբն ալ-Ֆուրաթի, ալ-Մակրիզիի, Իբն Թաղրի Բիրզիի, ալ-Կալիլաշանդիի, Իբն Շադդադի, Իբն ալ-Շիհնայի երկերը: Այնուամենայնիվ, աշխատանքի ժամանակագրական ընդարձակ սահմանները թույլ չեն տվել հեղինակին մանրամասնորեն անդրադառնալ այդ աղբյուրների հայտնած բոլոր տեղեկութիւններին: Այլ կերպ ասած՝ նա շատ դեպքերում պարզապէս սահմանափակվում է արաբագիր պատմիչների՝ հայ-մամլուքյան առնչութիւնների համար կարևորութիւն ներկայացնող հաղորդումները դուրս հանելով՝ խորամուտ չլինելով դրանց աղբյուրագիտական քննութեանն ու միմյանց և այլալեզու աղբյուրների հետ ունեցած հակասութիւնները երևան բերելուն¹⁸:

¹⁶ Տե՛ս R.J. Scott, *Mamlūk-Armenian relations during the Bahrī period to the fall of Sīs (1250-1375)*, McGill University, Montreal, 1981 (unpublished MA thesis): 1250-1517 թթ. եփպոսոսում և Ասորիփում կառավարած մամլուքյան եկուդ դինաստիաների «Բահրի» և «Բուրջի» հորոշումների մասին կիսուեմ 2.1 եմթալլաում:

¹⁷ Հմտ. այս աշխատանքի մասին Ստյոարտի հայտնած կարծիքի հետ: Տե՛ս A.D. Stewart, *The Armenian Kingdom*, p. 17:

¹⁸ Ամեն դեպքում Սֆոթն իր նախաբանում ընդգծում է, որ իր աշխատանքն ոչ քե հավակնում է անդրադառնալ հայերի և մամլուքների 1250-1375 թթ. հաւաքեութիւնների բոլոր սապեկտ-

Հայ-մամլուքյան հարաբերությունների շատ դրվագներում պարզություն մտցնելու գործում իր կարևոր նպաստն է բերել Երուսաղեմի Եբրայական համալսարանի պրոֆեսոր Ռեուվեն Ամիտայը՝ մամլուքյան պատմության արդի փորձառու մասնագետներից մեկը։ Մամլուքյան սուլթանության և մոնղոլական Իլխանության հակամարտության և ռազմական առճակատման 60-ամյա ընթացքին նվիրված նրա բազմաթիվ հոդվածներում և մենագրություններում մոնղոլների դաշնակից Կիլիկյան Հայաստանի գործոնը երբեք չի անտեսվել¹⁹։ Սույն աշխատանքի ժամանակագրական սահմանների հետ առավել համադրելի է նրա «Մոնղոլները և մամլուքները։ Մամլուք-իլխանյան պատերազմը 1260-1280 թթ.» մենագրությունը, որում ներկայացված է հակամարտության պատմության առաջին քսանամյա ժամանակաշրջանը։ Այստեղ նրա ուշադրության կենտրոնում են եղել ոչ միայն մոնղոլ-մամլուքյան քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները և բուն ռազմական գործողությունների ընթացքը, այլև հակամարտության թաքնված բաղադրիչները՝ մարտավարության և ռազմավարության, մարտական գործողությունների նախապատրաստման և վարման, փոստային համակարգերի, լրտեսության և հետախուզության հետ կապված հարցերը։ Մենագրությունը սկզբնաղբյուրային ամուր հիմք ունի։ Մամլուքյան և իլխանական սկզբնաղբյուրներն օգտագործված են շատ հետևողականորեն։ Լատին, ասորական աղբյուրների հետ մեկտեղ բավական հաջող օգտագործված են նաև եվրոպական թարգմանություններով հասանելի հայկական աղբյուրները (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակնեբցի, Վարդան Արևելցի, Հեթում Կոռիկոսցի, Ստեփանոս Օրբելյան), որոնք ըստ հեղինակի հատկապես կարևոր են «Փոքր Հայաստանի դերի ֆմնարկման համար։ Չնայած երբեմն դրանք հաղորդում են տեղեկություններ ավելի լայն հարցերի վերաբերյալ»²⁰։ Այս գրքի հրապարակումից 23 տարի է անցել,

ներին, այլ միայն ուղղված նրանց հակամարտության զարգացման հիմնական ուղղությունները։ Տե՛ս **R.J. Scott**, *Mamlūk-Armenian relations*, p. 4:

¹⁹ **R. Amitai-Preiss**, *Mongols and Mamluks: The Mamluk-İlkhanid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge, 1995.

²⁰ Անդ, p. 7:

և այդ ընթացքում մի շարք նորահայտ աղբյուրներ են դիտական շրջանառության մեջ դրվել, որոնց պարունակած տեղեկություններով վերաքննման են ենթակա արդեն Հայտնի բազմաթիվ տվյալներ, լրացնելի կամ վերանայելի են մի շարք փաստեր: Մեր աշխատանքը Ռ. Ամիրտայի մենագրության հետ բազմաթիվ հատվող կետեր ունի, որոնց վերաբերյալ մեր տեսակետները կձևակերպենք հետագա շարադրանքում յուրաքանչյուրի համար իր տեղում: Նրա գիրքն այն ուսումնասիրություններից է, որոնք մշտապես գրասեղանին ենք ունեցել սույն աշխատանքը շարադրելիս²¹:

Հայ-մամլուքյան հարաբերությունների պատմության ուսումնասիրության հաջորդ առաջընթաց քայլը կատարել է Անգուս Սոյուարթը 2001 թ. հրատարակած իր «Հայոց թագավորությունն ու մամլուքները: Պատերազմը և դիվանագիտությունը Հեթում Բ-ի թագավորության ընթացքում (1289-1307 թթ.)» մենագրությամբ: Աշխատանքի ներածությունից, աղբյուրների տեսությունից և թեմայի ուսումնասիրության պատմության շարադրանքից պարզ է դառնում, որ հեղինակը բավական լուրջ է մոտեցել իր առջև դրված խնդրին: Նա Կիլիկիայի պատմության ժամանակակից ուսումնասիրողներից առաջինն էր, որ բարձրաձայնեց ոլորտի կարևորագույն «բացերից» մեկը՝ չհշտելով, որ «արաբական աղբյուրները, որոնք շատ հաճախ անտեսվել են թագավորության պատմության հետազոտողների կողմից, իրականում կարող են օգտակար լինել նրա ներքին գործերի [բազմաթիվ] մանրամասները հայտնաբերելու կամ դրանց վրա լույս սփռելու տեսանկյունից»²²: Չնայած վերնագրում նշած ժամանակագրական սահմաններին՝ Ա. Սոյուարթն իր մենագրություն

²¹ Հարկ ենք համարում հիշատակել Բայբարսի կառավարման շրջանին նվիրված ևս մի արժեքավոր ուսումնասիրություն՝ Պ. Թորաուի հեղինակությամբ: Գիրքը գրվել է գերմաներեն (P. Thorau, *Sultan Baibars I. von Ägypten: ein Beitrag zur Geschichte des Vorderen Orients im 13. Jahrhundert*, Wiesbaden, 1987), որից հետո թարգմանվել է նաև անգլերեն (P. Thorau, *The Lion of Egypt: Sultan Baybars I and the Near East in the thirteenth century*, transl. by P.M. Holt, London and New York, Longman, 1992) և արաբերեն (Bîtir Tawrâû, *Al-Zâhir Baybars. Ishâm fi târîh al-Šarq al-adnâ fi al-qarn al-tâlî ‘aşara, tarğamat Muḥammad Ğudayd, murâğā’a wa-taqdîm Aḥmad Huṭayṭ, Qadmus, Dimašq, 2002*): Ցավով, սույն աշխատանքը գրելիս ոչ Պ. Թորաուի գրքի բնօրինակը և ոչ էլ թարգմանություններն օգտագործելու հնարավորություն չենք ունեցել:

²² A.D. Stewart, *The Armenian Kingdom*, p. 2.

սկսում է Հեթում Բ-ի իշխանությունը նախորդած ժամանակաշրջանում հայ-մամլուքյան հարաբերությունների ընդհանրական անդրադարձով: Այս հատվածում ուսումնասիրողը գերազանցապես հենվում է Մ. Կանարի վերն ակնարկված հոգվածի վրա, որը, ինչպես ինքն է պնդում, իր աշխատանքի համար որպես «մոդել և ներշնչանք» է ծառայել²³: Ստյուարտը մերթըմերթ մեջբերումներ է անում նրանից, ամփոփում նրա փաստարկները: Նա միայն հազվադեպ է փորձում էական լրացումներ ու հավելումներ կատարել Կանարի շարադրանքին և անգամ որոշ աղբյուրներ հղում այնպես, ինչպես Կանարն իր ծանոթագրություններում²⁴: Մենագրության ուրույն արժեքը նրա երրորդ գլուխն է, որում մամլուքյան սկզբնաղբյուրների լույսի ներքո լուսաբանված է Հեթում Բ-ի կառավարման ժամանակաշրջանը:

Օգտագործված աղբյուրների հետ ծանոթությունը Ստյուարտն սկսում է այն պնդմամբ, թե ինքն ամեն կերպ ջանացել է «ի ցույց դնել Մամլուքյան սուլթանության արաբական աղբյուրների ներուճակ հնարավորությունները (պոտենցիալը)» թեմայի լուսաբանման գործում, բայց հետո ավելացնում է, թե սահմանափակվել է միայն «տպագիր հրատարակություններով լայնորեն հասանելի աղբյուրներով»²⁵: Մամլուքյան պատմագրության իր օգտագործած աղբյուրների շարքում Ստյուարտն առանձնացնում է հատկապես ալ-Այնիին և ալ-Մակրիզիին, որոնք համեմատաբար ուշ շրջանի պատմիչներ լինելով, այնուամենայնիվ, հարուստ տեղեկություններ են պահպանել իրենցից առաջ ապրած պատմիչների երկերից: Արաբագիր մյուս հեղինակներից ուսումնասիրողն առանձնացնում է Աբու ալ-Ֆիդային: Վերջինս, որ Այյուբյան էմիր էր և հետագայում նաև Համայի կառավարիչ ու սուլթան է եղել, իր երկում բազմաթիվ իրադարձություններ ներկայացրել է ականատեսի և անմիջական մասնակցի աչքերով՝ հաճախ զարմացնելով «Հայոց թագավորության ներքին գործերի մասին իր տեղեկացվածության աստիճանով»²⁶: Տարօրինակ է, որ արաբերենին տիրապետելով Ա. Ստյուարտն իր աշ-

²³ Անդ. p. 16:

²⁴ St' u orf' naly, Անդ. p. 44, n. 4, 6 կամ p. 55, n. 47:

²⁵ Անդ. p. 18:

²⁶ Անդ. p. 19:

խատանքում, այնուամենայնիվ, մի շարք արաբալեզու սկզբնաղբյուրների «լայնորեն հասանելի» բնագրերի փոխարեն, օգտվել է միայն եվրոպական լեզուներով առկա թարգմանություններից: Աբու ալ-Ֆիդան այդ հեղինակներից մեկն է²⁷: Օգտագործված են նաև ալ-Ջադարիի և ալ-Յունինիի՝ Սովաթեի և Լի Գուռյի մասնակի հրատարակությունները²⁸, ինչպես նաև Իզզ ալ-Դին իբն Շադդադի, Մուֆֆադդալ իբն Աբի ալ-Ֆադալի, Իբն ալ-Դավադարիի և Իբն ալ-Սուկաիի երկերը: Առաջնային կարևորություն երկու աղբյուրներ՝ ալ-Նուվայրին և Բայբարս ալ-Մանսուրին, օգտագործված են Շ.Մ. Էլհամի 1293-1298 թթ. ընդգրկող մասնակի հրատարակությամբ: Հատվածական թարգմանություններից և մասնակի հրատարակություններից օգտվելու պատճառով Սոյուլարտի աչքից վրիպել են խիստ կարևոր հաղորդումներ, ինչպես, օրինակ, 1292 թ. Հռոմկլայի գրավման ականատես եղած Բայբարս ալ-Մանսուրիի բացառիկ նկարագրությունը: Հետևապես աշխատությունը մեր օրերում՝ հրատարակությունից շուրջ երկու տասնամյակ անց, նորահայտ աղբյուրների լույսի ներքո նոր աշխատությամբ լրացվելու անհրաժեշտություն ունի:

Անկախ վերոգրյալից՝ Սոյուլարտի գիրքը հույժ կարևոր նպաստ էր հայոց պատմության համար մամլուքյան աղբյուրների ներկայացրած արժեքը գնահատելու առումով՝ Կիլիկյան Հայաստանի հետազոտությունները հարստացնելով Հեթում Բ-ի իշխանության տարիներին հայ-մամլուքյան հարաբերությունների քիչ հայտնի կամ տակավին անհայտ բազմաթիվ մանրամասներով:

Կիլիկյան Հայաստանին նվիրված իր աշխատություններում (“La Cilicie au carrefour des empires”, “Le Royaume Arménien de Cilicie”) արաբական աղբյուրներին մշտապես մեծ կարևորություն է տվել Ֆրանսահայ պատմաբան և Կիլիկիայի պատմության ամենահմուտ մասնագետներից մեկը՝ Արմեն Կոդ Մուրաֆյանը: 2012 թ. նա պատմա-

²⁷ Խոսրո ֆ. Հոլտի հատվածական անգլերեն թարգմանության մասին է, որ մեզ անհասանելի է եղել այս աշխատանքը գրելիս: St' u The Memoirs of a Syrian Prince: Abū'l-Fidā', Sultan of Hamāh (672-732/1273-1331), translated with an introduction by P. M. Holt, Franz Steiner, Wiesbaden, 1983:

²⁸ Այս հեղինակների երկերի հրատարակությունների մասին կխոսենք ստորև:

բանների դատին հանձնեց երկար սպասված *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)* երկհատոր աշխատությունը, որը նրա շուրջ քառորդ-դարյա պրպտումների ամբողջացումը լինելով՝ իրավամբ վերջին տարիների խոշորագույն ներդրումներից մեկն է Կիլիկիայի պատմությունից հետազոտության ասպարեզում²⁹:

Մովսեփյանը, միջնադարյան սկզբնաղբյուրների փայլուն գիտակ լինելով, իր «համրագիտաբանային» աշխատությունը կառուցել է աղբյուրագիտական լայն հենքի վրա: Ի շարս հայկական, բյուզանդական, լատին և ասորական (ինչպես նաև որոշ պարսկական) բազմաթիվ և բազմազան աղբյուրների՝ «Լևանտյան Հայաստանում»-ում նշանակալի տեղ է տրված նաև արաբալեզու պատմագրությունը: Հեղինակը ջանք չի խնայել օգտագործելու նաև ԺԲ-ԺԶ դարերի արաբական պատմագրության՝ եվրոպալեզու թարգմանություններով (որոնց մեծ մասը հատվածական են) հասանելի երկերը: Մեզ հետաքրքրող մամուլության շրջանի պատմագիրներից նա օգտագործել է Իզզալ-Դին իբն Շադգադի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Ջահաբիի, ալ-Յունինիի, ալ-Ջազարիի, Իբն ալ-Ֆուրաթի, Իբն ալ-Սուկաիի, «Բայբարսի և ճեռոնա Կալավունի ֆառտուլար ալ-Ջահիրի» (պետք է լինի՝ «Իբն Աբդ ալ-Ջահիր»)՝³⁰, ալ-Մակրիզիի, ալ-Այնիի և ալ-Ումարիի, Իբն ալ-Շիհնայի երկերի անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն մասնակի թարգմանությունները:

Ինչևէ, արաբական աղբյուրների հետ իր ծանոթության մեջ Մովսեփյանը որոշ վրիպումներ է թույլ տալիս³¹: ԺԳ-ԺԶ դարերի արա-

²⁹ Հատկանշական է, որ մեմագրությունը բովանդակում է շատ ավելին, քան Կիլիկիայի պատմությունը: Նրանում ներկայացված է նաև բուն Հայաստանի և ընդհանրապես հայաշխարհի ԺԱ-ԺԴ դարերի ֆաղափական, եկեղեցական և մշակութային պատմությունը: Աշխատության մասին տես **Բադյան Ա.**, «Կող Մուսաֆյան, Մերձավոր Արևելքի Հայաստանը (ԺԱ-ԺԴ դարեր)», *ԲՄ*, № 20, 2014, էջ 447-467 (գրախոսություն), ինչպես նաև **ճույնի և Վ. Տեր-Ղևոնդյանի**՝ «Մերձավոր Արևելքի Հայաստանը (ԺԱ-ԺԴ դարեր)», *ԲՀ*, № 1, երևան, 2013, էջ 145-158 (գրախոսություն):

³⁰ **Cl. Mutafian**, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, Les Belles Lettres, Paris, 2012, t. 1, p. 46.

³¹ Նա գրում է, որ Մուֆադդալի 1260-1340 թթ. ընդգրկող պատմությունը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Բյուշեն: Մինչդեռ Բյուշեն թարգմանել է միայն 1260-1317 թթ. պարփակող մասը: Բացի այդ նա ալ-Մակրիզիի «Քիթաբ ալ-սուլուք»-ի ժամանակագրական սահ-

բական մատենագրության երկերի միայն մի մասին տիրապետելով և ձեռքի տակ ունենալով՝ բնական է, որ հեղինակը դժվարանալու էր համակարգված ձևով և պատմական գիտելիքի սերնդափոխության ամբողջական ավանդույթի լույսի ներքո դիտել ու քննարկել այս կամ այն արաբագիր հեղինակի՝ Կիլիկիայի պատմութեանը վերաբերող վկայությունները, ինչը, որ շատ դեպքերում հաջողողութեամբ կատարել է, օրինակ, հայկական, լատին կամ բյուզանդական աղբյուրների դեպքում: Մի դեպքում, օրինակ, Մութաֆյանը, Յակուտ ալ-Համալիի մոտ հանդիպող wald Dāwud («Դավթի սերունդ») և Āl Dāwud` («Դավթի զարմ») արտահայտությունները, հակառակ Նալբանդյանի տեսակետի, կապել է Դավիթ Արքակաղնեցու անվան հետ³²: Մինչդեռ արաբագիր այլ պատմիչների (Իբն ալ-Ֆուրաթ և ալ-Մակրիզի) մոտ այս արտահայտության մյուս կիրառությունները ցույց են տալիս, որ այստեղ իրականում «Պահլավունիների տոհմ» է նկատի առնված³³: Մեկ ուրիշ դեպքում հայագետը պարսիկ մատենագիր Ջուվայնիի մոտ եղած sulṭān-e Tākavor («Թաֆալունի սուլթան») արտահայտությունը կապում է Ավագ Զաքարյան իշխանի անվան հետ, մինչդեռ Բար Հերեթսի արաբերեն ժամանակագրությունն օգնում է պարզություն մտցնել այս հարցում:

Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրություններում ցայսօր անբավարար ուշադրություն է դարձվել երկրի տեղագրական և պատմաաշխարհագրական նկարագրությունը, ճարտարապետական կառույցների հետազոտությունը: Կիլիկյան Հայաստանի պատմական սահմաններում եղած բերդերի և քաղաքների մեծամասնությունն այժմ հարևան Թուրքիայի Հանրապետության տարածքում է, և այն-

մաններ է նշում 1181 և 1436 թվականները՝ 1171-1441 թվականների փոխադրում: Բրատսկոյեթյունները կծանոթագրեն ստորև:

³² Cl. Mutafian, *L'Arménie*, p. 513.

³³ St'ya Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 2, bi-taḥqīq Muḥammad Farīd al-Šayyāl (*A critical edition of Volume II of Tārīḥ al-duwal wa'l mulūk by Muḥammad B. 'Alī ibn al-Furāt*, University of Edinburgh, 1986, unpublished), ց. 153-154 [pp. 253-254]: Վերջինս իրականում մեջբերում է Յակուտի ժամանակակից հայեցողի պատմիչ Իբն Աբի Տայյի (մահ. 1229-1233 թթ. միջակայքում) երկից, որը չի հասել մեզ: Հմմտ. al-Maqrīzī, *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, ց. 2, bi-taḥqīq Muḥammad al-Ya'lawī, Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 1991, ց. 512-513:

տեղ պեղումներ կատարելու հնարավորությունից հասկանալի պատճառներով զրկված ենք: Արդի հետազոտողի առջև կանգնած մյուս բարդությունը պատմական աղբյուրներից հայտնի բերդերի նույնականացման հարցն է, քանի որ Կիլիկյան Հայաստանի այժմյան տարածքում գտնվող ամրոցների մի մասը կիսավեր է, մյուս՝ զգալի մասը, հիմնովին ավերված: Բացի այդ դրանցից շատերը կրում են թուրքական անուններ, որոնք ոչ մի աղբյուր չունեն դրանց պատմական անվանումների հետ: Այնուհանդերձ, հատկանշական է, որ այս ուղղությամբ կարևոր քայլեր են կատարվել, թեև հիմնականում արտերկրի մասնագետների կողմից: Հայկական պետության ճարտարապետության՝ ի մասնավորի ռազմական ամրոցաշինության ուսումնասիրության մեջ առաջընթաց քայլ էր Դվիդի Վանդեկերհովի *Medieval Fortifications in Cilicia: The Armenian Contribution to Military Architecture in the Middle Ages* («Կիլիկիայի միջնադարյան ամրությունները: Հայերի ներդրումը միջնադարյան ռազմական ճարտարապետության մեջ»)³⁴ բոլորովին վերջերս հրատարակված աշխատությունը: Սա, թերևս, Ռոբերտ Էդվարդսի հայտնի աշխատություններից³⁵ հետո Կիլիկիայի հայկական ամրությունների ուսումնասիրության երկրորդ հաջողված և երկար սպասված փորձն է: Վանդեկերհովն իր այս գրքով փորձել է ինչ-որ չափով լրացնել ոլորտում եղած բացերը՝ քննության ենթարկելով Կիլիկիայի տարածքի շուրջ 104 ամրություններ: Դրանց մեծամասնությունը, չնայած մշակութային վանդալիզմի դրսևորումներին, հայկական միջնադարյան ամրոցաշինության և ճարտարապետության դեռևս չճշման հետքեր ունեն: Հատկանշական է, որ հեղինակը մի քանի անգամ անձամբ այցելել է Կիլիկիա և հիշյալ բերդերի մոտ կեսն իր աչքով տեսել է, նկարագրել դրանք սեփական դիտարկումների

³⁴ D. Vandekerckhove, *Medieval Fortifications in Cilicia: The Armenian Contribution to Military Architecture in the Middle Ages*, Brill, Leiden, 2019.

³⁵ Տե՛ս R.W. Edwards, *The fortifications of Armenian Cilicia*, Dumbarton Oaks, Washington, 1987, ինչպես նաև սույն թեմայով հետազոտողի բազմաթիվ հրապարակումները: Տե՛ս նույնի՝ “Two New Byzantine Churches in Cilicia”, AS, vol. 32, 1982, pp. 23-32; նույնի՝ “Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia (part 1)”, DOP, vol. 36, 1982, pp. 155-176 և “Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia (part 2)”, DOP, vol. 37, 1983, pp. 123-146:

հիման վրա, չափազերել, քարտեզագրել և տեղորոշել: Նա նաև մինչ օրս անհայտ մի շարք ամրություններ է հայտնաբերել Տավրոսյան լեռներում, ինչպես նաև դրանց հարող բնակավայրերի հետքեր: Այդ տվյալները կիլիկյան բերդամրոցների իր ձեռքով արված լուսանկարների հետ մեկտեղ նա գետեղել է իր գրքի վերջնամասում՝ աշխարհագրական տեղեկատուում (gazetteer):

Հնագիտական տվյալները պատմական գիտելիքի հետ համադրելու անհրաժեշտությունը գիտակցելով՝ Դ. Վանդեկերքհովն իր ուսումնասիրության մեջ օգտագործել է միջնադարյան հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրների վկայությունները: Սկզբնաղբյուրային տվյալները (խոսքը մասնավորապես արաբական պատմական և աշխարհագրական սկզբնաղբյուրների մասին է-Գ.Դ.) աշխատանքում նույնքան հմտորեն չեն օգտագործված որքան հնագիտական տվյալները: Օգտագործած սկզբնաղբյուրների և գրականության տեսությունից արդեն ենթադրում ենք, որ հետազոտողը հիմնականում եվրոպական թարգմանություններով (հիմնականում մասնակի) հասանելի արաբական աղբյուրներ է օգտագործել (Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանհի Al-Faḥ al-quṣṣī-ն, Իբն ալ-Ասիրի Al-Kāmil fī tāriḥ-ը, Իբն ալ-Ազիմի Zubdat al-ḥalab-ը, Աբու Շամայի Kitāb al-Rawḍatayn-ը, Աբու ալ-Ֆիդայի Al-Muḥtaṣar-ը, զպտի Մուֆադդալի Al-Nahḡ al-sadīd-ը, ալ-Մակրիդի Kitāb al-sulūk-ը, Իբն ալ-Շիհնայի Al-Durr al-muntaḥab-ը), որոնց մասին խորը գիտելիքներ չի ունեցել: Նա, օրինակ, Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին իբն Շադդադի մասին խոսելիս, որպես նրա աշխատություն, սխալմամբ ծանոթագրում է Իզզ ալ-Դին իբն Շադդադի Al-Aḥq al-ḥaṭīra երկի բնագրի հրատարակությունը, իսկ հաջորդ էջում որպես վերջինիս երկ՝ Ա.Մ. Էդդեի Ֆրանսերեն մասնակի թարգմանությունը³⁶: Ուսումնասիրողը Մուֆադդալին սխալմամբ մուսուլման հեղինակ է անվանում³⁷:

Պետք է նշել, սակայն, որ Կիլիկիայի բերդերի մասին հաղորդող արաբական աղբյուրներն անհամեմատ ավելի շատ ու բազմաթիվ են, և դրանց բովանդակած տեղեկությունները շատ ավելի հարուստ են, քան

³⁶ D. Vandekerckhove, *Medieval Fortifications*, pp. 10-11.

³⁷ Տե՛ս նույն տեղում, p 10:

կարելի է պատկերացում կազմել Վանդեկերչհովի գրքից: Դրանց պարունակած նյութը, գուցե և ավելին է, քան հայկական և այլ օտարալեզու աղբյուրների պարունակած տեղեկությունները միասին վերցրած:

Մեր հետազոտություններում մենք մեկ անգամ չէ, որ շեշտադրել ենք այն կարևորությունը, որ ունեն արաբական՝ այդ թվում մամլուքյան պատմական և աշխարհագրական երկերը հայկական Կիլիկիայի տեղագրական նկարագրության համար: Այս թեմայով վերջերս մեր հեղինակած երկու հոդվածները՝ նվիրված Կիլիկյան Հայաստանի երկու քիչ հայտնի բերդերի (ալ-Թիհիթին կամ Կանամելլային և Քայնուքին), դրա վառ վկայությունն են³⁸:

Հայ-մամլուքյան հարաբերությունների լուսաբանման ուղղությամբ նշանակալի քայլեր են կատարվել նաև արաբական աշխարհի հետազոտողների կողմից ինչպես Մամլուքյան սուլթանության ընդհանուր պատմությանը, Իլխանության հետ նրա հարաբերություններին, այնպես էլ առանձնապես Կիլիկիայի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Իրենց աշխատություններում Կիլիկյան Հայաստանին և մամլուքների հետ վերջինիս հարաբերություններին անդրադարձ կատարած արաբ ժամանակակից հետազոտողներից հիշատակության են արժանի հատկապես Ֆայիդ Համմադ Մուհամմադ Աշուրը և Սաիդ Աբդ ալ-Ֆաթթահ Աշուրը: Նրանցից առաջինն իր «Մամլուք-մոնղոլական փառափառ հարաբերությունները մամլուքյան առաջին հարստության օրոք» և «Իսլամական ջիհադն ընդդեմ խաչակիրների և մոնղոլների մամլուքյան դարաշրջանում» մենագրություններում³⁹ ընդհանուր գծերով՝ մի քանի էջի սահմաններում, ներկայացրել է նաև հայ-մամլուքյան ռազմաքաղաքական հակամարտության և գաղափարախոսական առճակատման ակունքներն ու զարգացման պատմությունը: Մամլուք-հայկական քաղաքական հարաբերությունների քննությունը

³⁸ Գ. Դանիելյան, «Կիլիկյան Հայաստանի բերդերն ու փառափառ ըստ մուսուլմանական աղբյուրների (հոդվածաշար): Ա. ալ-Թիհիթի», JSAS, v. 27, Issue 2, Brill, Leiden, 2021, էջ 151-182 և նույնի՝ «Կիլիկյան Հայաստանի բերդերն ու փառափառ ըստ մուսուլմանական աղբյուրների (հոդվածաշար): Բ. Քայնուք», ՀՀՀ, 2021 (հանձնված է հրատարակության):

³⁹ Fāyid Ḥammād Muḥammad ‘Āṣūr, Al-ġihād al-Islāmī ʿidda al-ṣalībiyyīn wa-l-muḡūl fī al-‘aṣr al-mamlūkī, Ṭarābulus, 1995, ք. 229-236.

տեղ է գտել նաև խաչակրությունների և եվրոպական միջնադարյան պատմություն մասնագետ Սաիդ Աշուրի աշխատություններում: Վերջինս բացի այն, որ Հայոց թագավորության և եգիպտոսի սուլթանության փոխհարաբերություններն արծարծել է (թեկուզ և հարևանցի-Գ.Դ.) իր «Մամլուխան դարաշրջանը եգիպտոսում և Ասորիքում» և «եգիպտոսն ու Ասորիքն Այյուբյանների և Մամլուխների օրոք» մենագրությունների⁴⁰ էջերում, թեմային նաև մի առանձին հոդված է նվիրել «Մամլուխան սուլթանությունն ու Փոֆր (այն է՝ Կիլիկյան-Գ.Դ.) Հայաստանի թագավորությունը» վերնագրով⁴¹:

Հայերն ու Հայոց պատմությունը դեռ նախորդ դարի 80-ականներից մշտապես կենտրոնական տեղ են զբաղեցրել նաև մեկ այլ եգիպտացի հետազոտողի՝ անվանի հայագետ, Բենհայի համալսարանի պրոֆեսոր Ֆայիզ Նաջիբ Իսկանդարի պատմագիտական հետաքրքրություններում: Ճիշտ է՝ նրա աշխատանքները (օրինակ՝ «Հայաստանը բյուզանդացիների և «բարեպաշտ» իսլամների միջև հայոց Ղևոնդ պատմիչի գրվածքների լույսի ներքո» (1982 թ.), «Հայաստանը բյուզանդացիների և սելջուկ թյուրքերի միջև» (1983 թ.), «Հայաստանի իսլամական նվաճումները» (1983 թ.), «Հայաստանի մայրաքաղաք Անիի գրավումը սելջուկների կողմից հիջրայի 456 / 1064 թ.» (1987 թ.), «Տնտեսական կյանքը Հայաստանում իսլամական նվաճման ժամանակ» (1988 թ.), «Հայաստանի գրավումը բյուզանդական կայսրության կողմից» (1988 թ.), «Les richesses de l'Arménie au temps des Bagratides (885-1045)» (1988 թ.), «Մուսուլմանները, բյուզանդացիները և հայերը հայ ժամանակակից պատմիչ Սեբեոսի գրվածքների լույսի ներքո» (1993 թ.)⁴² և բազմաթիվ այլ գրքեր) հիմնա-

⁴⁰ Sa'īd 'Abd al-Fattāh 'Aṣūr, Miṣr wa-l-Šām fī 'aṣr al-Ayyūbiyyīn wa-l-Mamālīk, Dār al-Nahḍa al-'Arabīyya, Bayrūt (առանց տարեթվի), ինչպես նաև **Նույնի**՝ Al-'Aṣr al-Mamālīkī fī Miṣr wa-l-Šām, Dār al-Nahḍa al-'arabīyya, al-Qāhira, 1976:

⁴¹ St'ē **Նույնի**՝ Saltanat al-Mamālīk wa-mamlakat Armīnyat al-Ṣuḡrā, Buḥūt wa-dirāsāt fī tārtih al-'uṣūr al-wuṣṭā, al-Qāhira, 1977, թ. 225-278:

⁴² Fāyiz Naḡīb Iskandar, Armīnya bayna al-bizantiyyīn wa-l-ḥulafā' al-rāšidīn fī du' kitābāt al-mu'arriḥ al-armanī Ḡifūnd, al-Iskandariyya, 1982; **Նույնի**՝ Armīnya bayna al-Bizantiyyīn wa-l-Atrāk al-salāḡīqa, al-Iskandariyya, 1983; **Նույնի**՝ Al-Futūḥāt al-islāmiyya li-Armīnya (11-40 h. / 632-661 m.), al-Iskandariyya, 1983; **Նույնի**՝ Istilā' al-salāḡīqa 'alā 'āsimat Armīnya Ānī, sanata 456 h. / 1064 m., al-Iskandariyya, 1987; **Նույնի**՝ Al-Ḥayāt al-iqtisādiyya fī Armīnya ibāna al-fath al-islāmī, al-Iskandariyya, 1988; **Նույնի**՝ Ġazw al-Imbrāṭūriyya al-Bizantiyya li-Armīnya 437 h./

կանում նվիրված են բուն Հայաստանի պատմութեանը՝ արաբական արշավանքներին, Հայաստանում իսլամական գերիշխանութեան շրջանին, տնտեսական կյանքին, հայ-բյուզանդական հարաբերութիւններին, սելջուկ-թյուրքական արշավանքներին, Բագրատունիների հայոց թագավորութեանը, խաչակրաց արշավանքներին, որոնք մեզ քաջ հայտնի են: Հայագետը վերջին տասնամյակում սկսել է հետաքրքրութիւն ցուցաբերել նաև Կիլիկիայի Հայաստանի պատմութեան նկատմամբ՝ հրապարակելով մի քանի փոքրածավալ ուսումնասիրութիւններ, որոնց մասին վերջերս ենք իմացել: Մասնավորապես՝ 2008 թ.՝ «Հոմսի դիմակայությունը մոնղոլների և հայերի դաշնակցությամբ», 2010 թ.՝ «Փոքր Հայաստանի թագավորության առևտուրն իտալական ֆաղափների և Բահրի Մամլուֆյան սուլթանության միջև», 2012 թ.՝ «Փոքր Հայաստանի թագավորությունը մուսուլմանների և խաչակիրների միջև՝ պատմիչ Սմբատի գրվածքներում» հոգւած-գրքույկներին, որոնք տակավին հասանելի չեն մեզ: Հետևաբար հեղինակի՝ այս հոգւածներում արտահայտած դիտարկումներին կանդորադառնանք մեր հետագա հետազոտութիւններում, մեզ հասու դառնալուն պես: Վերջերս, օրինակ, ձեռք ենք բերել Ֆայիզ Իսքանդարի 1999 թ. հեղինակած մի հոգւած-գրքույկը՝ «Մամլուֆյան սուլթան ալ-Աշրաֆ իսլիլ իբն Կալալունը և «Մուսուլմանների բերդի» գրավումը» վերնագրով: Այն նվիրված է 1292 թ. մամլուքների կողմից Հռոմկլա բերդի գրավմանը: Այս հոգւածի մասին նույնպես իմացել ենք Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմութեանը նվիրված մեր աշխատութեան հրատարակութիւններից հետո, ուստի և այն չենք օգտագործել այդ հետազոտութիւնը գրելիս:

Անշուշտ, Ֆայիզ, Սաիդ Աշուրներից և Ֆայիզ Իսքանդարից բացի մամլուք-հայկական հակամարտութեան առանցքային դրվագներն իրենց ընդհանրական, ոչ մանրաքնին անդրադարձն են գտել արաբական աշխարհի նաև այլ հետազոտողների մոտ: Առանձին հիշատակութեան են արժանի, օրինակ, Ջամալ ալ-Դին Սարուր⁴³, Մուհամմադ

1045 m., al-Iskandariyya, 1988; **նույնի**՝ *Les richesses de l'Arménie au temps des Bagratides* (885-1045), Alexandrie, 1988; **նույնի**՝ *Al-Muslimūn, al-Bizantiyyūn wa-l-Arman fī du' kitābāt al-mu'arrih al-armanī Sibiyūs* (11-40 h. / 632-661 m.), Dār al-ḥikma al-Yamāniyya, Ṣan'ā', 1993:

⁴³ **Muḥammad Ḡamāl al-Dīn Sarūr**, *Dawlat banī Qalāwūn fī Miṣr, Dār al-fikr al-'arabī, al-Qāhira*, 1947, ք. 224-231.

Սուհայլ Տակկուշը⁴⁴ և Ադիլ Աբդ ալ-Հաֆիզ Համզան⁴⁵: Նրանցից առաջին երկուսը հայ-մամլուքյան քաղաքական ավելի քան հարյուրամյա հարաբերություններին ընդամենը յոթից տաս էջ են հատկացրել, իսկ վերջինը հայոց թագավորության և Մամլուքյան սուլթանության համարադրությունը քննել է Հալեպի «փոխարհայության» հետ հարաբերությունների լույսի ներքո:

Արաբական աշխարհում հայ-մոնղոլական և նաև հայ-մամլուքյան հարաբերությունների ուսումնասիրության մեջ առաջնութաց քայլ էր Աբդ ալ-Ալլան Ջասիմ Ալի Ալ Սանիի 2007 թ. լույս տեսած «Մոնղոլների և Փոքր Հայաստանի թագավորության փառափառ հարաբերությունները 1236-1277 թթ. և դրանց հետոն իսլամական պատմության մեջ» վերնագրով մենագրությունը⁴⁶, որը հեղինակի 2006 թ. Կահիրեի համալսարանում պաշտպանած ատենախոսության հրատարակությունն է: Սա, թերևս, առանձնապես Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված առաջին մենագրությունն է արաբական պատմագիտության մեջ: Աշխատանքը գրված է ԺԲ-ԺԵ դարերի մեծածիփ արաբական սկզբնաղբյուրների լայն հիմքի վրա (Իբն ալ-Դավադարի, Իբն Աբդ ալ-Ջահիր, Իբն Վասիլ, Իբն Քասիր, Աբու ալ-Ֆիդա, Իբն Դուլմա, Իբն Թադրի Բիրդի, Բայբարս ալ-Մանսուրի, ալ-Ջահաբի, ալ-Ումարի, ալ-Քուլթուբի, ալ-Նուվայրի, ալ-Յունինի, Իզզ ալ-Դին Իբն Շադդադ, ալ-Մակրիզի, ալ-Այնի, ալ-Կալկաշանդի և այլք): Պետք է նշել, սակայն, որ ուսումնասիրողը երբեմն արաբագիր այս կամ այն հեղինակի հաղորդումը վերցնում է գուտ որպես արժանահիշատակ տեղեկություն և չի փորձում գտնել ու մատնանշել վկայության իրական սկզբնաղբյուրը: Զորօրինակ, Հռոմկլայի մասին ծանոթագրության մեջ նա մեջբերում է ալ-Քուլթուբիի հաղորդումը հայրապետանիստ գլխավոր անառիկու-

⁴⁴ Muḥammad Suhayl Ṭaqqūš, *Tārīḥ al-mamālīk fī Miṣr wa-bilād al-šām, Dār al-Nafā'is, al-Qāhira*, 1997, թ. 281-286, 319-321.

⁴⁵ 'Ādil 'Abd al-Ḥāfiẓ Ḥamza, *Niyābat Ḥalab fī 'aṣr salāṭīn al-mamālīk, al-Hay'a al-Miṣriyya al-'amma li-l-kitāb, al-Qāhira*, 2000, թ. 144-166.

⁴⁶ 'Abd Allāh Ġasim 'Alī Āl Ṭānī, *Al-'Ālāqāt al-siyāsiyya bayna al-Muğūl wa-Mamlakat Armīnya al-ṣuğrā 1236-1277m. wa-aṭaruhā fī al-tārīḥ al-Islāmī, Dār al-ulūm al-'arabiyya, Bayrūt*, 2007.

Թյան մասին⁴⁷, որն ընդամենը վերաշարադրանքն է բերդի 1292 թ. պաշարմանն ականատես եղած Բայբարս ալ-Մանսուրիի վկայություն⁴⁸:

Բացի տպագիր հրատարակություններ ունեցող աղբյուրներից Ալ Սանին հայոց թագավորությունյան մասին որոշ տեղեկություններ է քաղել նաև ձեռագիր մանր ժամանակագրությունների ձեռագրերից՝ հիմնականում Կահիրեի եգիպտական և Փարիզի ազգային գրադարանների հավաքածուներից: Իր աղբյուրների տեսություն մեջ Ալ Սանին գրում է, թե թեմայի ուսումնասիրություն համար ամենամեծ հետաքրքրությունն ու կարևորությունը ներկայացնում են հայկական աղբյուրները՝ առավել քան իսլամական աղբյուրները: Աշխատանքում հայագիր պատմիչներից օգտագործված են հատկապես Սմբատ Գունդստաբլի⁴⁹ «Տառեգիր», Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Վարդան Արևելցու «Հաաֆումն պատմութեան», Գրիգոր Ակներցուն (կամ Ականցին) վերագրված «Պատմութիւն թաթարաց» և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկերի՝ եվրոպական լեզուներով (հիմնականում ֆրանսերեն) թարգմանությունները, ինչպես նաև Հեթում Կոռիկոսցու երկի լատիներեն և հին ֆրանսերեն տարբերակների հրատարակությունները: Ինչպես երևում է, հեղինակը զգալիորեն հայկական անձնանունները և

⁴⁷ Տե՛ս Անդ, §. 71, հ. 1:

⁴⁸ Հմմտ. **Baybars al-Mansūrī**, *Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra*, bi-taḥqīq Dunāld Rītšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998, §. 288:

⁴⁹ Ալ Սանին գրում է, թե «գունդստաբլ» տիտղոսի միակ նիշատակությունն արաբալեզու պատմագրության մեջ Բար Հեբրեոսի (Իբն ալ-Իբրիի) արաբերեն ժամանակագրության մեջ է: Պետք է նշել, որ հայոց սպարապետին («գունդստաբլ» տիտղոսի հայերեն համարժեքն է) արաբ պատմիչներից *kandāstabl* է անվանում նաև Իբն Աբդ ալ-Ջաֆիրը: Տե՛ս **İbn ‘Abd al-Zāhir**, *Al-Rawḍ al-zāhir fī sirāt al-Malik al-Zāhir*, bi-taḥqīq ‘Abd al-‘Azīz al-Ḥuwaytīr, al-Riyāḍ, 1976, §. 270: Եզրույթի այլ կիրառություններ կան նաև Իբն ալ-Կալանիսիի և Իբն Քասիրի մոտ: Օ. Ապանովիչի ենթադրությամբ՝ *kundāstabl* տիտղոսն Իկոնիայի սելջուկները հավանաբար փոխառել են կիլիկյան-հայկական (գունդստաբլ) կամ լատինական (*comes stabuli*) աղբյուրներից: Տե՛ս **О.С. Апанович**, “К вопросу о должности кундстабла у сельджукидов Рума в XIII в.: Кундстабл Руми и Михаил Палеолог”, *ВВ*, Том 66 (91), 2007, стр. 183-184, прим. 74: Հմմտ. **Cl. Cahen**, *La Turquie pré-ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d’Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 183, 192-193, ինչպես նաև **D. Korobeinik**, *Byzantium and the Turks in the thirteenth century*, Oxford University Press, Oxford, 2014, pp. 92-94:

այլևայլ անվանումներն արաբերեն տառադարձելիս: Հայ մատենագիրների անունները, օրինակ, տառադարձված են այնպես, ինչպես ֆրանսերեն հրատարակություններում: Գրիգոր Ակներցուն ըստ այդմ հեղինակը կոչում է Ǧrīgūr Dākñīr (ֆրանսերեն Grigor d'Akner-ի համանմանությամբ), Վահրամ Եղեսացուն (Բաբունուն)` Fahrām Dīdes⁵⁰ և այլն: Վերոբերյալ դիտարկումները բնավ նպատակ չունեն թերագնահատելու հեղինակի կատարած աշխատանքը: Միայն այն հանգամանքը, որ սա հայ-մոնղոլական հարաբերություններին և Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված առաջին արաբալեզու մենագրությունն է, արդեն իսկ շատ ոգևորիչ է:

Դրանում համոզվելու ևս մի առիթ է տվել Շառլաք Ռամադան Հուջջան 2011 թ. իր հրատարակած «Մամլուխան առաջին պետության և Իրանի իլխանական պետության հարաբերությունները (648-732/1250-1335 թթ.)» գրքով⁵¹: Մենագրությունը գրված է աղբյուրագրիտական լայն հենքի վրա. հետազոտության ոլորտ են ներգրավված ինչպես Եգիպտոսի սուլթանության, այնպես էլ Իլխանության պաշտոնական պատմագրության արաբալեզու և պարսկալեզու գրեթե բոլոր կարևոր սկզբնաղբյուրները: Սակայն օտարալեզու գրականությունը սույն աշխատանքում օգտագործված է ոչ նույնքան հետևողականորեն, ինչպես արաբալեզու գրականությունը: Մենագրության մատենագրություն մեջ և ծանոթագրություններում, օրինակ, Ռ. Ամիրտալի գիրքը, չգիտես ինչու, վերագրված է Դ. Մորգանին⁵², աչքի են զարնում եվրոպական լեզուներով ուսումնասիրությունների վերնագրերում եղած սխալները:

Ըմբռնելով Եգիպտոսի սուլթանության և Իլխանության ու մյուս կողմից Սուլթանության և հայոց թագավորության հակամարտությունների փոխկապակցվածությունը՝ Շառլաք շուջջան իր գրքում բավական տեղ է հատկացրել նաև հայ-մամլուքյան քաղաքական հարաբերությունների լուսաբանմանը: Գրքի առաջին չորս գլուխները

⁵⁰ Եվ ընդհանրապես աշխատանքը պատշան կերպով սրբագրված չէ: Մենագրության բուն տեքստում և ծանոթագրություններում շատ են շարվածային-տպագրական վրիպակներ և անհամապատասխանություններ:

⁵¹ *Šawkat Ramaḍān Huǧǧa, Al-‘Ālāqāt bayna dawlat al-Mamālīk al-ūlā wa-dawlat ilḥāniyya Fāris, 648-736 h. / 1250-1335 m., ‘Amān, 2011.*

⁵² Տե՛ս Անդ, թ. 66 (հ. 6), 67 (հ. 4), թ. 555:

նվիրված են մամլուք-մոնղոլական քաղաքական փոխհարաբերու-
թյունների և ռազմական բախումների լուսաբանմանը: Երկրորդից
չորրորդ գլուխներում առանձին անդրադարձ է կատարված նաև Հայ-
մամլուքյան հակամարտության սկզբնավորմանն ու զարգացմանը:
Մամլուքների և մոնղոլների առճակատման շրջանկարում հեղինակը
փորձել է վեր հանել ու մատնանշել Հայ-մամլուքյան քաղաքական-
դիվանագիտական հարաբերությունների կարևորագույն դրվագները՝
հազվագյուտ դեպքերում միայն խորանալով մանրամասնություն-
ների մեջ: Մի դեպքում, երբ հեղինակը խոսում է Հայոց թագավորու-
թյունից մամլուքների խլած ալ-Թինի (al-Tīnī) ամրոցի մասին, գրում
է, թե դժվարացել է Հայտնի աշխարհագրական երկերում տեղեկու-
թյուններ գտնել այս ամրոցի մասին: Մինչդեռ արաբ պատմիչների
կողմից Qal'at al-Tīnī, al-Tīnāt կամ al-Tīnāt անուններով կոչվող բերդն
ամենայն հավանականությամբ տաճարականներին պատկանած Կա-
նամելլան (Canamella) է, որ գրավվել ու ավերվել է նաև սուլթան
Բայբարսի 1266 թ. արշավանքի ժամանակ⁵³:

Վերջերս իրաքցի հետազոտող Ֆաթհի Սալիմ ալ-Լահիբիի հեղինա-
կությամբ լույս է տեսել Կիլիկյան Հայաստանին նվիրված ևս մի աշ-
խատանք՝ «Փոքր Հայաստանի քաղալորությունը (հաբեան ումերի հետ փա-
ղափական հաւաքերությունների հետազոտություն) (հիջրայի 463-776 / 1071-
1374 թթ.)» խորագրով⁵⁴: Ծիշտ է՝ նշված թվականները (1071-1374 թթ.)

⁵³ Տե՛ս Անդ. շ. 263: Հմմտ. Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawd, շ. 270-271 և al-Maqrīzī, Kitāb al-sulūk li-ma'rifat duwal al-mulūk, ց. 1.2, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Maṭba'at al-ta'līf wa-l-tarğama wa-l-naṣr, al-Qāhira, 1957, շ. 552: Օրինակ, Իբն ալ-Ադիմի (մահ. 1262 թ.) Buğyat al-talab երկով կարդում ենք. «[Ալ-Թինաթը] բերդ է ծովի ափին՝ Բայասի և Մահիս միջև»: Տե՛ս Ibn al-'Adīm, Buğyat al-talab fī tāriḥ Ḥalab, bi-tahqīq Suhayl Zakkār, Bayrūt, 1988, ց. 1, շ. 223: Ալ-Թինիին Կանամելլայի հետ նույնացնելու մասին տե՛ս Molin K., Unknown Crusader castles, Cambridge University Press, 2001, p. 180, 186, ինչպես նաև R. Amitai-Preiss, Mongols, p. 118, n. 50 և Մ.-Ա. Շևալիե, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից (թարգ. Ֆրանսեզեմից Վ. Պողոսյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 82-83 (հետալսու՝ Մ.-Ա. Շևալիե, Կիլիկյան Հայաստան): Հմմտ. Ղ. Ալիշան, Սիսուան (Համագրություն Հայկական Կիլիկիո եւ Լեւոն Մեծագործ), Վենետիկ, 1885, էջ 396: Տե՛ս նաև ներկում՝ 3.1 մասում:

⁵⁴ Fathī Sālim Ḥamīdī al-Lahībī, Mamalakāt Armīnya al-ṣuğrā (Dirāsa fī-l-'alāqāt al-siyāsiyya ma'a-l-qiwa al-muğāwira li-l-fatra (463-776 h. / 1071-1374 m.), Dār al-ğayda', 'Ammān, 2019. Ընդ որում, սա ամենևին էլ այս հեղինակի «հայերին վերաբերող» առաջին գիրքը չէ: Նրա

միանգամից աչքի են զարնում և տարակուսանք առաջացնում, այնուամենայնիվ, ձեռնպահ պիտի մնանք որևէ մեկնաբանությունից, քանի զեռ չենք ծանոթացել բովանդակությունը:

Ինչևէ, բոլոր այս ուսումնասիրությունների գոյությունն արդեն իսկ ապացուցում է, որ «Մերձավոր Արևելի հայոց պետության» նկատմամբ հետաքրքրությունը վաղուց արդեն սովորական երևույթ է նաև արդի արաբական պատմագիտության մեջ:

Այսպիսով, հայ-մամլուքյան հարաբերությունների արաբական սկզբնաղբյուրների բացահայտման ուղղությամբ օտար հետազոտողների կողմից կարևոր քայլեր են կատարվել: Յավալի է, որ այդ փորձերը գերազանցապես անտեսված են մնացել հայաստանյան արևելագիտության և հայագիտության կողմից, և ոլորտում հայրենական մասնագետների կատարած աշխատանքը գերազանցապես հիշյալ ուսումնասիրություններից անջրպետված է զարգացել:

Քաջ գիտակցելով Կիլիկյան Հայաստանի և ընդհանրապես հայոց պատմության համար միջնադարյան արաբական աղբյուրների ներկայացրած կարևորությունը՝ Նորհրդային Հայաստանի արաբագիտական դպրոցի ներկայացուցիչներից Հակոբ Նալբանդյանը ձեռնարկել է արաբագիր երեք հեղինակների՝ աշխարհագրագիր Յակուտ ալ-Համավիի, Համայի Այյուբյան կառավարիչ Աբու ալ-Ֆիդայի և Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին Իբն Շադդադի երկերի՝ հայերի և հարակից երկրների պատմության մասին տեղեկություններ պարունակող հատվածների թարգմանություն⁵⁵: Հեղինակն իր աշխատությունն օժտել է հարուստ ծանոթագրություններով՝ մեծ տեղ հատկացնելով իրեն հայտնի այլ արաբական սկզբնաղբյուրներից քաղված վկայությունների համեմատական քննությանը: Մեր ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող մամլուքյան շրջանի հեղինակներից

գրչին է պատկանում նաև «Հայերի և վրացիների հարաբերություններն իսլամական ուժերի հետ Աբբասյան դարաշրջանում» վերնագրով մի աշխատանք: Տե՛ս **Fathī Sālim Ḥamīdī al-Lahībī**, *Dirāsāt fi ‘alāqat al-Arman wa-l-Kurğ bi-l-qiwa‘ al-Islāmiyya fi-l-‘aṣr al-‘Abbāsī*, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 2013:

⁵⁵ **Հ.Թ. Նալբանդյան**, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965:

Նալբանդյանը ժամանակ առ ժամանակ վկայակոչում է Իբն ալ-Վար-դիին, ալ-Ումարիին, Մուֆադդալ Իբն Աբի ալ-Ֆադաիլին, ալ-Մակրի-զիին, Իբն Թադրի Բիրդիին, ալ-Կալկաշանդիին, ալ-Սախավիին, Իբն Իյասին և ալ-Սուլյուտիին: Նալբանդյանի գիրքը՝ արաբական աղբ-յուրներից քաղված նյութով ու Հայագիտական շրջանառություն մու-ծած նորույթներով, մեր օրերում էլ՝ տպագրությունից (1965 թ.) 56 տարի անց, գիտական լուրջ արժեք ունի և լայնորեն օգտագործվում է Հայագիտական և Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասի-րություններում: Պետք է նշել, սակայն, որ աշխատությունը գերծ չէ թերություններից ու սխալներից, որոնցից քչերն են շտկվել ժամա-նակի ընթացքում, ընդհակառակը փոխեփոխ օգտագործվելով՝ ամրա-գրվել են հետագա հետազոտողների մոտ: Մենք մտադիր չենք այս-տեղ ընդարձակ գրախոսություն հանդիսանալ աշխատությունը, այլ կսահմանափակվենք միայն մեկ-երկու դիտարկումներով, իսկ մամ-լուքյան աղբյուրների հետ կապված մյուս անճշտություններին անհրա-ժեշտության դեպքում կանդրադառնանք հետագա շարադրանքում՝ այսպես ասած՝ «խենց տեղում»: Մի դեպքում, օրինակ, Նալբանդյանը 1250 թ. Եգիպտոսի սուլթան դարձած Շաջար ալ-Դուրրի մասին գրում է. «Աս-Սոյուսին, Մակրիզին, Իբն ալ-Վարդին նրան ծագումով քրոնի են համարում: Սախավի պատմիչը նրա մասին ասում է, թե ծագումով քրոնի էր, թեև ոմանֆ կարծում են, թե հայունի էր: Նույնը կրկնում է և Աբու-լ-Ֆի-դան»⁵⁶: Մինչդեռ Նալբանդյանի հիշատակած աղբյուրներից Շաջար ալ-Դուրրի ազգություն մասին Իբն ալ-Վարդին և ալ-Սուլյուտին կար-ծես թե չեն հիշել⁵⁷, իսկ մյուս երեքի մոտ իրար հար և նման ձևակեր-պումներ են՝ «ազգությամբ քրոնի էր, բայց ոմանֆ ասում էին, թե հայունի էր» (*kānat turkiyyat al-ğins, wa-qīla bal (կամ kānat) armaniyyatan*), հետևա-բար այս աղբյուրների հաղորդումներն իրար հակադրելու կարիք այս-տեղ առհասարակ չկար⁵⁸:

⁵⁶ St' u Անդ, էջ 271:

⁵⁷ **Ibn al-Wardī**, *Tatimmat al-Muḥtaṣar fī aḥbār al-baṣar*, ց. 2, al-Qāhira, 1868, ց. 193-194; **al-Suyūfī**, *Tārīḥ al-ḥulafā'*, Dār ibn Ḥazm, Bayrūt, 2003, ց. 365.

⁵⁸ **Al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.2, ց. 361; **al-Saḥāwī**, *Tuḥfat al-aḥbāb wa-buḡyat al-ṭullāb*, Maktabat al-kulliyāt al-Azhariyya, al-Qāhira, 1986, ց. 95; **Abū al-Fidā'**, *Tārīḥ Abī al-Fidā' al-*

Նալբանդյանի աշխատությունում տեղ գտած շատ վրիպումներ կապված են Աբու ալ-Ֆիդա և Իբն ալ-Վարդի պատմիչների երկերի հետ: Վերջինիս երկն իրականում Աբու ալ-Ֆիդայի պատմության համառոտագրությունն է (հազվադեպ շեղումներով և հավելումներով), որին նա կցել է 1329 / 1330-1348 թթ. ընդգրկող իր «շարունակությունը»: Ձեռքիով երկու պատմիչների երկերի այս առնչության մասին⁵⁹ Նալբանդյանն Աբու ալ-Ֆիդայի իր թարգմանություն մեջ երբեմն բաց է թողնում որոշ դրվագներ, ինչպես, օրինակ, հիջրայի 531 թ. (1136/1137 թ.) Վահրամ Պահլավունու՝ Եգիպտոսի սուլթանի վեզիրության պաշտոնից հեռացվելու մասին վկայությունը, փոխարենը մի այլ տեղում նույն հաղորդումը բերում է Իբն ալ-Վարդիից, չնայած նրան, որ առաջինի մոտ հաղորդումն ավելի հանգամանալից է և հիշատակության արժանի մանրամասներ է պարունակում⁶⁰: Նալբանդյանի աշխատության մյուս ակնբախ թերությունն օգտագործած աղբյուրը (խոսքը մասնավորապես արաբալեզու երկերի մասին է) շատ հաճախ պատշաճ կերպով չհղելն է (երկի վերնագիր, հրատարակություն), անգամ երբ դրանից ընդարձակ թարգմանություն է մեջբերում:

Ահա այսպես, հայագիտական շրջանակներում ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր հեղինակների և հատկապես մամլուքյան սկզբնաղբյուրների մասին եղած սահմանափակ գիտելիքները, հայերեն թարգմա-

musammā al-Muḥtaṣar fī aḥbār al-baṣār, ց. 2, bi-taḥqīq Maḥmūd Dayyūb, Dār al-kutub al-ʿilmiyya, Bayrūt, 1997, ց. 300.

⁵⁹ Աբու ալ-Ֆիդայի երկի հետ իր փոփոխ ծանոթության մեջ Նալբանդյանը գրում է. «Այդ ընդարձակ աշխատությունը նախորդ պատմագիրների գործերի մի կոմպիլյացիա է, և շատ դժվար է ճշտել, թե այստեղ որն է իրապես հեղինակի բաժինը»: Տե՛ս Զ.Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 211: Մի այլ տեղում էլ գրում է, թե Իբն ալ-Վարդին օգտվել է Աբու ալ-Ֆիդայից, բայց այդպես էլ չի խոսում այս երկու երկերի կապի մասին: Տե՛ս Անդ. էջ 280:

⁶⁰ Տե՛ս Անդ. էջ 261, ինչպես նաև Ibn al-Wardī, Tatimmat al-Muḥtaṣar, ց. 2, ց. 40-41: Հմմտ. «Այդ թվականին ալ-Հաֆիզը պաշտոնից ազատեց իր վեզիր քրիստոնյա հայ Բահրամին այն պատճառով, որ նա մուսուլմանների պաշտոններում հայերին էր նշանակում և [այդպես] ստորացնում նրանց: Այդ բանից դժգոհեց Ռիդվան իբն ալ-Վալախշի (քնագրում՝ al-Wakḥaṣṣī) անունով մեկը, որ մեծաքանակ զորք հավաքեց և գնաց Բահրամի դեմ: Բահրամը փախավ ալ-Սահիդ, բայց հետո հետ դարձավ: Ալ-Հաֆիզը բռնեց նրան և կալանեց պալատում: Հետո, սակայն, հիշյալ Բահրամը կրոնավոր դարձավ, և ալ-Հաֆիզը նրան ազատություն շնորհեց»: Տե՛ս Abū al-Fidāʾ, Al-Muḥtaṣar, ց. 2, ց. 77:

նությունները բացակայութիւնը շատ հաճախ գիտական ուսումնասիրութիւններ սպրդած շփոթմունքների և սխալների պատճառ են դարձել: Տարիներ առաջ այս խնդրի առջև է կանգնել, օրինակ, Արամ Հովհաննիսյանը իր «Կիլիկիայի հայկական թագավորության և եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ.» գրքով: Սա հայ-մամլուքյան հարաբերութիւնների ամբողջ պատմութեան ուսումնասիրութեանը նվիրված առաջին համապարփակ աշխատանքն է հայագիտութեան մեջ, ինչն արդեն իսկ շատ ոգևորիչ է: Մեծ կարևորութիւն տալով թեմայի ուսումնասիրութեան համար արաբ հեղինակների երկերի ներկայացրած արժեքին՝ ուսումնասիրողն իր օգտագործած աղբյուրների շարքում առաջին հերթին նշում է ալ-Մակրիզին, ով հեղինակի բնութագրմամբ լինելով «եգիպտոսի սուլթանի արմունի պատմիչը, գրել է մամլուք սուլթանների 1250-1308 թթ. պատմությունը»⁶¹: Պատմիչի մասին իր այս փոքրիկ ծանոթութեան մեջ Հովհաննիսյանը միանգամից մի քանի վրիպում է թույլ տալիս: Նախ, ալ-Մակրիզին ձեռնամուխ է եղել իր Kitāb al-sulūk երկը գրելուն և առհասարակ նվիրվել է պատմագրութեանը, երբ արդեն թողել էր հասարակական-քաղաքական կյանքը և անգամ մեկուսացել հասարակութիւնից: Ավելին, իր այդ երկում նա անխնա քննադատութեան է ենթարկել իր ժամանակի մամլուքներին: Երկրորդ, Kitāb al-sulūk-ը ոչ թե մամլուք սուլթանների 1250-1308 թթ. պատմութիւնն է, այլ, իրականում, ինչպես ինքը՝ մատենագիրն է գրում իր երկի նախաբանում, «ֆուդ Այյուբյան արմունի և թյուրք ու շեքեզ Մամլուքյան սուլթանների»⁶² պատմութիւն: Այն իրականում ներառում է 1171-ից մինչև 1441 թվականն ընկած ժամանակաշրջանը: Հովհաննիսյանին ամենայն հավանականութեամբ շփոթութեան մեջ է գցել ալ-Մակրիզիի երկի Մ. Քատրմերի կատարած 1250-1309 թթ. պարփակող ֆրանսերեն թարգմանութիւնը⁶³:

⁶¹ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորութեան և եգիպտոսի սուլթանութեան հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008, էջ 15 (հետագայում՝ Ա. Հովհաննիսյան, Կիլիկիա):

⁶² Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.1, al-Qāhira, 1934, ց. 9.

⁶³ Histoire des Sultans Mamlouks, de l’Égypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed Makrizi, traduite en Français par M. Quatremère, 2 t., Paris, 1837, 1845.

Հետագա շարադրանքում ալ-Մակրիզիից մեջբերումներ անելիս նա մերթ հղում է Քատրմերի հիշյալ թարգմանությունը, մերթ էլ Նալբանդյանի ծանոթագրություններում ալ-Մակրիզիից կատարված հատվածական թարգմանությունները: Մի դեպքում, օրինակ, երբ գրում է 1292 թ. սուլթանի կողմից Հռոմկլայում գերեվարվածների թվի մասին, նա կրկնում է Նալբանդյանի թույլ տված սխալը (12.000)⁶⁴ և չի համեմատում Քատրմերի տված թվի հետ (1.200)⁶⁵: Մյուս արաբագիր պատմիչներից Հովհաննիսյանն օգտագործել է Աբու ալ-Ֆիդայի՝ Նալբանդյանի կատարած հայերեն հատվածական և զպտի Մուֆադ-դալի՝ Էդ-Բլոշեի կատարած ֆրանսերեն թարգմանությունները: Հակառակ ուսումնասիրողի պնդման, թե Մուֆադ-դալի երկը «սկսվում է Մամլուքյան սուլթանության հիմնադրումով և շարունակվում մինչև XIV դարի երկրորդ տասնամյակը»՝ այն իրականում ընդգրկում է 1260-1341 թթ. իրադարձությունների նկարագրությունը, որի միայն 1260-1317 թթ. ընդգրկող մասն է հրատարակել Բլոշեն: Երկի մնացած մասը գերմաներեն թարգմանությամբ հետագայում հրատարակել է Ս. Կորտանտամերը⁶⁶: Իր օգտագործած արաբագիր հեղինակների հետ ծանոթությունը Հովհաննիսյանը եզրափակում է Իբն ալ-Վարդիին և «Իբն ալ-Ֆուրիին» նշելով: Այնինչ «Իբն ալ-Ֆուրի» անունով պատմագիր մեզ հայտնի չէ: Գտնում ենք նաև այս սխալի ակունքը: Պարզվում է՝ խոսքը բաղդադցի մատենագիր Իբն ալ-Ֆուլատիի մասին է: Նրա գրչին վերագրվող Al-Hawādīt al-ġāmi'a երկից մեջբերում կատարելով հեղինակի անունը նախ տարընթերցել են Գ. Մսրլյանը և Ա. Ալպոյաճյանը⁶⁷: Նրանց սխալը, փաստորեն, արմատացել է պատմիչի այդ հաղորդումը փոխառած հետագա հայագետ-ուսումնասիրողների՝ մասնավորապես Նալբանդյանի, իսկ վերջինիս հետևելով՝ նաև Հովհաննիսյանի մոտ:

⁶⁴ Տե՛ս Զ.Թ. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները*, էջ 278 և Ա. Հովհաննիսյան, *Կրիկիա*, էջ 114:

⁶⁵ M. Quatremere, *Histoire des Sultans Mamlouks, de l'Egypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi*, t. 2.3, Paris, 1845, p. 141.

⁶⁶ Այս հրատարակությունները կծանոթագրենք ներքևում:

⁶⁷ Հմմտ. Զ.Թ. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները*, էջ 276-277 և Ա. Հովհաննիսյան, *Կրիկիա*, էջ 16:

Իր «Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ.» մենագրությունից մեջ, Նալբանդյանի կատարած թարգմանությունից մեջ, արաբագիր հեղինակներից Աբու ալ-Ֆիդայի վկայություններն է օգտագործել նաև Դավիթ Թինոյանը: Ըստ նրա՝ «այս չափազանց ուշագրավ աշխատությունն ավարտվում է 1347 թ. մամլուխան արշավանքի նկարագրությամբ»⁶⁸: Շարունակելով վերևում սկսած քննարկումը՝ նշենք, որ Աբու ալ-Ֆիդայի երկն իրականում ավարտվում է 1329 թ. իրադարձությունների նկարագրությամբ, իսկ ինքը հեղինակը մահացել է 1331 թ.: Թինոյանը 1329 թվականից հետո ընկած դեպքերի շարադրանքում Իբն ալ-Վարդիի վկայությունները հղելիս մերթ դրանց հեղինակին «Աբու ալ-Ֆիդայի շարունակող»⁶⁹ է անվանում, մերթ նրա մահվան թվականի մասին մոռանալով՝ «Աբու ալ-Ֆիդա»⁷⁰:

Վերոնշյալից եզրակացնում ենք, որ Հայաստանում մամլուքյան պատմագրության ուսումնասիրությունը և մամլուքյան պատմագրական երկերի ներգրավումը որպես Կիլիկյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրներ դեռևս ձևավորված ավանդույթ չունի: Այս ուսումնասիրությամբ մենք մտադիր ենք մեր կարողության սահմաններում լրացնել այս բացը՝ հայագիտությանը և մասնավորապես Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրողներին տրամադրելով մատենագրական թարմ նյութ, ծանոթացնել ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր մատենագիրների մի մեծ խմբի, որոնց ավանդած պատմագրական գրականության ուսումնասիրությունը բավական է՝ պատասխանելու համար հայագիտությանը հետաքրքրող մեծ թվով հարցերի, ճշտումներ և լրացումներ մտցնելու Կիլիկիայի պատմության մեջ հայտնի բազմաթիվ դրվագներում, պարզաբանելու մամլուքյան պաշտոնական պատմագրության դիրքորոշումը Կիլիկիայի Հայոց թագավորության նկատմամբ: Հետևապես, աշխատանքի առաջին մասը նվիրված է ԺԳ-ԺԶ դարերի մամլուքյան պատմագրության և առանձնապես Իբն Աբդ ալ-Ջահիրի մատենագրական ժառանգության հետ ծանոթությանը:

⁶⁸ Դ. Թինոյան, Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Երևան, 2011, էջ 10-11:

⁶⁹ Տե՛ս Անդ, էջ 93, 95:

⁷⁰ Տե՛ս Անդ, էջ 75, 78: